ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԿՐՏՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՐՄԵՆԻ Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/204 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
2	Մեբելգրադ	Մեկտեղանի մահճակալ՝ Մեբելգրադ ապրանքանիշի: Մահճակալի արտաքին չափսերը՝ (Լ x Բ x Խ) 95 x 105 x 210 սմ, իսկ քնելու մասի չափը՝ 90 x 200սմ, (Համապատասխան ստանդարտ մեկտեղանոց ներքնակի չափին): Մահճակալի կառուցվածքային հիմքը պետք է պատրաստված լինի որակյալ լամինացված փայտասալից (ԼԴՍՊ), որն ապահովում է բարձր մեխանիկական ամրություն, մաշվածակայունություն և երկարաժամկետ շահագործման հուսալիություն: Արտաքին երեսպատման և տեսանելի հատվածների նյութը պետք է լինի ՄԴՖ՝ ապահովելով գեղագիտական բարձր որակ, հարթ մակերես և ինտերիերային համապատասխանություն: Կահույքի արտադրության հիմքում կիրառվող լամինացված ԼԴՍՊ-ն պետք է համապատասխանի գործող տեխնիկական նորմերին և ապահովի ինչպես կառուցվածքային կայունություն, այնպես էլ արտաքին տեսքի պահպանություն շահագործման ամբողջ ընթացքում: Մահճակալը կարող է չներառել հագուստի կամ այլ պահեստավորման ներքին հատված, սակայն պարտադիր բաղադրիչ է համարվում համապատասխան չափսի ներքնակի առկայությունը: Ներքնակը պետք է համապատասխան լինի 90 × 200 սմ չափին և ամբողջությամբ ապահովի օգտագործման հարմարավետություն: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը շահառուի հասցե պետք է մատակարարվի քանդված

		վիճակում՝ ամբողջական կցամասերով և մոնտաժման համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչներով: Փաթեթավորումը պետք է լինի գործարանային, ստվարաթղթե և պաշտպանիչ շերտերով ապահովված, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ պաշտպանված կլինի հաստ թղթով, փրփրապատ կամ այլ հարվածամեղմող նյութերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր մեխանիկական վնասները բացառելու նպատակով:Մահճակալի հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի միջոցներով և պատասխանատվությամբ: Մատակարարի կողմից պարտադիր է տրամադրել առնվազն 6 (վեց) ամիս երաշխիքային սպասարկում: Մատակարարման պահին արտադրողը կամ մատակարարը պարտավոր է ներկայացնել համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են ապրանքի համապատասխանությունը գործող տեխնիկական կանոնակարգերին, անվտանգության և որակի ստանդարտներին: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МКРТЧЯН ТИГРАН АРМЕНИ ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/204 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	товарный знак	технические характеристики
2		